

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թ.  
մայիսի 20-ի նիստի N 19  
արձանագրային որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅԱՆ 2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

հհ	Խնդիրը	Նպատակը
1	2	3
<b>ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱղաքականության իրականացման ռազմավարությունը կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում</b>		
1	Ապահովել ՄԱԿ-ի <<Կանաց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին>> կոնվենցիայի, Պեկինի համաժողովի հիմնական հանձնարարականների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված գենդերային հավասարությանն ուղղված միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների կատարումը	սեղի հատկանիշով խտրականության հաղթահարում և կանաց ու տղամարդկանց փաստացի հավասարության ձեռքբերում
2	Ապահովել ազգային օրենսդրությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը	հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում կանաց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսուրման համար, հասարակության իրավական և քաղաքական մշակույթի զարգացում
3	Զերծարկել հատուկ միջոցներ ապահովելու կանաց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում	օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումների ընդունման մակարդակում կանաց թերի ներկայացվածության հաղթահարում և սոցիալական համերաշնության ամրապնդում
4	Ներդնել գենդերային իրավիճակի շարժնթացի գնահատման և մշտադիտարկման ցուցիչների համակարգ	երկրում գենդերային իրավիճակի պարբերական գնահատում
5	Ներդնել գենդերային գիտելիքների հաղորդման բաղադրիչ /մոդուլ/ պետական ծառայողների վերապատրաստում իրականացնել ուսումնական հաստատությունների	պետական ծառայողների գենդերային գգայունության բարձրացում

	կրթական ծրագրերում	
6	Շարունակել կանանց լիդերության և սեփական իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաների ուսուցման դասընթացների կազմակերպման գործընթացը	կանանց իրավաբաղադրական գրագիտության բարձրացում, կազմակերպչական հմտությունների տիրապետում և կառավարչական գործունեության համար պայմանների ստեղծում, խչախ նաև կանանց համար քաղաքական մասնակցության հնարավորությունների ընդլայնում և ուսուցման մատչելիության ապահովում
7	Ապահովել պետական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության մասին վիճակագրական տվյալների հավաքումը, վերլուծությունը և տարածումը	գենդերային մոտեցումների արմատավորում երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներում, կանանց և տղամարդկանց իրավիճակի գնահատում, նրանց կարգավիճակի միջև առկա տարրերությունների վերհանում
8	Շարունակել գենդերային հիմնահարցերի վերաբերյալ հասարակական, քաղաքական գործիչների, քաղաքացիական ծառայողների համար հատուկ դասընթացների, սեմինարների, քննարկումների, փորձի փոխանակման կազմակերպումը	քաղաքական հիմնախնդիրների լուծմանը և երկրի կայուն տնտեսական զարգացմանը գենդերայնորեն հավասարակշռված մասնակցության կարևորության մասին իրազեկվածության բարձրացում
9	Զարգացնել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների սոցիալական գործընկերության մեխանիզմները	գենդերային հավասարության ձեռքբերման ուղղությամբ ՀԿ-ների սոցիալական գործառույթների լիարժեք իրականացում, հասարակական գործընթացների վրա դրանց ազդեցության հնարավորությունների ընդլայնում
10	Նպաստել գենդերային հավասարության քաղաքականության մշակման և իրականացման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներառող միասնական համակարգի հզորացմանը	գենդերային քաղաքականության իրականացման համակարգման և դրա իրականացման ընթացքի մշտադիտարկման ապահովում
11	Ապահովել արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում գենդերային վերլուծության, գնահատման և մշտադիտարկման իրականացումը	պետական, մարզային և համայնքային մակարդակներով աղետների ոխվերի կառավարման ոլորտում գենդերային ուղղորդման և վերլուծության, համապատասխան միջոցների (մեխանիզմների) և ուսուրսների ներդնում և ապահովում
12	Արտակարգ իրավիճակների ինստիտուցիոնալ կառավարման համակարգում գենդերային ուղղորդման և կանանց ներգրավվածության ապահովում	արտակարգ իրավիճակների կառավարման, որոշումների ընդունման, աղետների կանխարգելման և հետադետային գործընթացներում կանանց ներգրավվածության բարձրացում
<b>Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը սոցիալ-տնտեսական ոլորտում</b>		

13	Ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ՄԱԿ-ի և ԱՄԿ-ի սոցիալ-տնտեսական ոլորտի կոնվենցիաների, ինչպես նաև ՄԱԿ-ի հազարամյակի նպատակների կատարման մշտադիտարկումը	սերի հատկանիշով խտրականության հաղթահարում սոցիալ-տնտեսական ոլորտում, աշխատանքի և զբաղվածության ոլորտում կանանց փաստացի հավասարության ձեռքբերում, կանանց աղքատության կրճատում (ծայրահեռ աղքատության և սովոր վերացում)
14	Ինտեգրել գեներացին բաղադրիչը երկրի քաղաքական և տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերում և ներդնել սոցիալ-տնտեսական ուղղվածության ծրագրերի և նախագծերի գեներացին փորձաքննության անցկացման մեջսանիզմ	սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցում, կանանց և տղամարդկանց սոցիալական կարգավիճակի անհավասարակշռության վերացում, ըստ սերի՝ պետական ռեսուրսների բաշխման վերահսկում
15	Ներդնել գեներացին բաղադրիչը բյուջետավորման և պլանավորման գործընթացներում /գեներացին բյուջետավորման կիրառում (աստիճանական) բյուջետային ցիկլի տարրեր փուլերում/	պետական եկամուտների բաշխման և վերահսկման գործընթացներում կանանց մասնակցության աճի ապահովում, տնտեսական անվտանգության ամրապնդում
16	Ապահովել հավասար արժեքի աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն ստանալու կանանց և տղամարդկանց իրավունքի ամրագրումը և կիրառումը	գեներացին անհավասարության հաղթահարում, սերի հատկանիշով խտրական դրսուրումների կրճատում
17	Նախատեսել տնտեսական խթաններ և արտոնություններ՝ ուղղված գործառուների շահագրգորության բարձրացմանն ընտանեկան պարտականություններ ունեցող կանանց և տղամարդկանց աշխատանքի ըստունելու, ինչպես նաև ներդնել նրանց մասնագիտական որակավորման շարունակականությունն ապահովող մեջսանիզմներ	ծառայողական/աշխատանքային և ընտանեկան պարտավորությունները համատեղելու համար նպաստավոր/համապատասխան պայմանների ստեղծում, աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց մրցունակության բարձրացում, երեխաների խնամքով զբաղվելու համար տղամարդկանց խրախուսում
18	Նպաստել աշխատատեղերի ստեղծմանը և աշխատավարձի բարձրացմանը՝ հաշվի առնելով տնտեսության առավելապես կանանց զբաղվածությամբ ճյուղերի գեներացին կողմերը	կանանց գործազրկության մակարդակի իջեցում և հանրապետության աղքատ բնակչության կազմում կանանց տեսակարար կշռի կրճատում

19	Ապահովել ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացումը	Երկրի տնտեսության զարգացում, նոր աշխատատեղերի ստեղծում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, հասարակության միջին խավի ձևավորում, կանանց գործարարության խթանում, կին սկսնակ գործարաների ձեռներեցության աջակցություն
20	Ստեղծել կանանց համար նոր աշխատատեղեր արդյունաբերական ոլորտներում (հատկապես թեթև արդյունաբերության)	Կանանց զբաղվածության ապահովում, աշխատանքով ապահովված տղամարդկանց և կանանց հարաբերակցության կրճատում, կանանց կադրային ներուժի օգտագործում
21	Աջակցել կանանց ձեռնարկատիրական գործունեությանը և խթանել կանանց տնտեսական նախաձեռնություններին ուղղված վարկային ծրագրերը՝ հատկապես գյուղական վայրերում	Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում, աղքատության հաղթահարում և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորում
22	Բարեկավել գյուղատնտեսության և գյուղական ենթակառուցվածքները, ընդլայնել կանանց մասնակցության հնարավորությունները գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում	Գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարեկավում և եկամուտների ավելացում
23	Խթանել գյուղի կանանց աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացումը /Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում/, մասնավորապես, մատչելի պայմաններով տրվող վարկային և միկրովարկային ծրագրերի իրականացումը գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում	Գյուղական բնակավայրերում կանանց զբաղվածության մակարդակի բարձրացում, կանանց հնարավորությունների նպատակային օգտագործում, եկամուտների ավելացում
24	Զարգացնել և կատարելագործել անապահով ընտանիքների և բնակչության խոցելի խմբերի սոցիալական երաշխիքների համակարգը	Աղքատների և բնակչության խոցելի խմբերի նվազագույն կենսամակարդակի ապահովում, սոցիալական պաշտպանության բարձրացում, մարդկային զարգացում
25	Բարեփոխել կենսաթոշակային համակարգը՝ հաշվի առնելով կանանց և տղամարդկանց գենդերային դերերը	Կենսաթոշակային տարիքի կանանց և տղամարդկանց սոցիալական վիճակի բարեկավում, նվազագույն կենսամակարդակի ապահովում, աղքատության կրճատում
26	Ապահովել սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային հետազոտությունների և աշխատանքի շուկայում սեռի հատկանիշով խտրականության դեպքերի ուսումնասիրությունների պարբերական անցկացումը	Սոցիալ-տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց գենդերային իրավիճակի գնահատում, նրանց կարգավիճակի միջև առկա տարբերությունների վերհանում գենդերային անհավասարության հաղթահարում, սեռի հատկանիշով խտրական դրսևորումների կրճատում

27	Պետական ռեգերվի պահուստների ձևավորման գործընթացում և մարդասիրական օգնության բաշխման ժամանակ հաշվի առնել գենդերային հիմնախնդիրները	հետադեսային շրջանում կանաց և տղամարդկանց տարրեր կարիքների բացահայտում և հավասար պայմանների ապահովում
----	---	--

#### **Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը կրթության ոլորտում**

28	Ներառել գենդերային բաղադրիչը կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ	կրթության ու գիտության ոլորտում ծառայությունների ու ենթակառուցվածքների հավասար մատչելիության ապահովում կանաց և տղամարդկանց համար, անկախ սեռից, նրանց զարգացման և ինքնադրսնորման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծում
29	Ստեղծել ուսումնամեթոդական հիմք՝ գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման համար	սոցիալապես ակտիվ, պատասխանատու և ժողովրդավարական կողմնորոշում ունեցող քաղաքացիների դաստիարակության իրականացում, գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացում
30	Ներդնել գենդերային գիտելիքների հաղորդման քաղադիչ /մոդուլ/ մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացներում	մանկավարժական կադրերի իրազեկում գենդերային հիմնախնդիրների շուրջ, գենդերային կարծրատիպերի հաղթահարում, գենդերային հավասարակշուրջություն ապահովող դաստիարակության և ուսուցման իրականացում
31	Ներդնել ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշներ	ուսումնամեթոդական գրականության մշտադիտարկում և գենդերային փորձաքննության կանոնակարգված իրականացում
32	Խթանել գենդերային գիտական հետազոտությունների անցկացումը	գենդերային հետազոտություններ ներառող գիտական թեմաների ֆինանսավորում և իրականացում

#### **Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունն առողջապահության ոլորտում**

33	Ապահովել կանաց վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող կաթնագեղձերի և սեռական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացումը	կաթնագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի վաղ փուլերում հայտնաբերված դեպքերի թվի մեծացում 30% -ով
34	Ապահովել տղամարդկանց վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող սիրտ-անոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների, հատկապես թոքերի քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացումը	սրտանոթային հիվանդությունների և չարորակ նորագոյացությունների, հատկապես թոքերի քաղցկեղի վաղ հայտնաբերված դեպքերի թվի մեծացում 20% -ով
35	Ապահովել գյուղական շրջաններում տղամարդկանց և կանաց որակյալ բուժօգնության տրամադրումը, Երևանի	մարզերում /Իջևան, Արմավիր, Ապարան, Կապան/ բժշկական ժամանակակից կենտրոնների վերակառուցում և հազեցում

	բուժհաստատություններ ուղեգրումների կրճատումը	
36	Ապահովել մեծահասակների և երեխաների անհետաձեզելի բուժօգնության ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, հատկապես զյուղական բնակչության համար	արագ արձագանքման ծառայությունների թվի ավելացում հատկապես մայրական և նորածնային ծառայությունների գծով
37	Բարեկավել կանաց վերարտադրողական առողջությունը, ծննդօգնության բուժհաստատությունների կարողությունները	<<Առողջ մայրություն>> ծրագրի առավել արդյունավետ իրականացում, ամրությունը և ստացիոնար ծննդօգնության բուժհաստատությունների կանոնակարգում /աշխատանքի սկզբունքների մշակում/
38	Հզորացնել և զարգացնել ընտանիքի պլանավորման ծառայությունների ցանցը՝ հաշվի առնելով իրական վիճակը, ազգային առանձնահատկությունները և առողջապահության քաղաքականության նպատակները	հատուկ և սոցիալական խմբերում ընդգրկված կանաց և տղամարդկանց ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցներով օգտվելու հնարավորությունների ընդլայնում
39	Ֆինանսավորել հիվանդությունների կանխարգելման և վաղ ախտորոշման միջոցառումները՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները և հետևանքներն ամեն տարիքի կանաց և տղամարդկանց համար	պետական պատվերի չափորոշիչներում առողջության առաջնային պահպանման համակարգում սկրինինգային ծրագրերի ներառում հիվերտոնիկ հիվանդության, գլաուկոմայի, շագանակագեղձի, ուղիղ աղիքի քաղցկեղի վաղ հայտնաբերման համար
40	Նպաստել առողջ ապրելակերպի ու անվտանգ սեռական վարքագիծ ձևավորմանը	առողջ ապրելակերպի, ծիսելու դեմ պայքարի և անվտանգ սեռական կյանքի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացում
41	Ապահովել աշխատանքի անվտանգ պայմաններ լեռնահանքային արդյունաբերությունում, տրանսպորտային միջոցների շահագործման ոլորտում և այլ վնասակար արտադրություններում	լեռնահանքային արդյունաբերությունում, տրանսպորտային միջոցների շահագործման ոլորտում և այլ վնասակար արտադրություններում շահագործման անվտանգ պայմանների ապահովման և վերահսկման մեխանիզմների ներդրում
42	Նվազեցնել ՄԻԱՎ/ԶԻԱՀ վարակի տարածումը, մարդկանց իրազեկման և գիտելիքների բարձրացման միջոցով	ՄԻԱՎ/ԶԻԱՀ վարակի տարածման և կանխարգելման վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացում
43	Ապահովել աջակցություն կանաց և տղամարդկանց առողջության պահպանման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին	առողջության պահպանման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ աշխատանքային խորհրդի ստեղծում
44	Սեռով պայմանավորված ընտրովի արորտների կանխարգելում	սեռով պայմանավորված ընտրովի արորտների թվի կրճատում

**Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում**

<b>45</b>	Ստեղծել մշակութային հաստատությունների աշխատողների գենդերային կազմի վերաբերյալ վիճակագրական տվյալների բազա	նպատակային հարցումների միջոցով ոլորտի կադրերի գենդերային կազմի վերլուծություն
<b>46</b>	Ներդնել գենդերային գիտելիքների հաղորդման քաղաքիչ /մոդով/ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման ոլորտում, ինչպես նաև համապատասխան ոլորտի աշխատողների վերապատրաստման դասընթացներում	արտակարգ իրավիճակների կառավարման գենդերային կարիքների, խոցելիության ու կարողությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում
<b>47</b>	Ամրապնդել համագործակցությունը պետական մարմինների և ԶԼՄ-ների միջև՝ կանանց և տղամարդկանց միջև սոցիալական հավասարության ձեռքբերման հարցում	պետության կողմից հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված քայլերի լուսաբանում
<b>48</b>	Ձեռնարկել միջոցներ ԶԼՄ-ների գենդերային զգայունությունը բարձրացնելու ուղղությամբ, շարունակել լրագրողների համար գենդերային իրազեկության բարձրացման դասընթացների կազմակերպման գործընթացը	զանգվածային լրատվամիջոցների գենդերային զգայունության բարձրացում
<b>49</b>	Աջակցել, խրախուսել գենդերային հավասարության հիմնախնդիրը լուսաբանող զանգվածային լրատվամիջոցներին	գենդերային հիմնահարցերի լուսաբանման ապահովում, գենդերային կարծրատիպերի և սեռի հատկանիշով խտրական գործեղակերպի հաղթահարում
<b>Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինզի)</b> <b>կանխարգելման ոլորտում</b>		
<b>50</b>	Ապահովել սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) դեմ պայքարին ուղղված օրենսդրության կատարելագործումը՝ ՄԱԿ-ի մոդելային օրենսդրության և այլ միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներին և նորմերին համապատասխան	գործող իրավական ակտերի համապատասխանեցում միջազգային նորմերին, սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) կանխարգելում
<b>51</b>	Կատարելագործել իրավապահ մարմինների աշխատողների, սոցիալական և բուժաշխատողների պատրաստման և վերապատրաստման համակարգը	սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) գործերին գործնական օգնություն ցույց տալու համար հմտությունների զարգացում, երևոյթի կանխարգելում
<b>52</b>	Աջակցել սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման	սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) դեմ

	(թրաֆիքինգի) զոհերի հետ աշխատող սոցիալական հաստատությունների և սերգուավված մարմինների գործունեության գիտամեթոդական ապահովմանը	պայքարին ուղղված ծրագրերի և միջոցառումների վշտադիտարկում
53	Աջակցել սեղի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ուժեղացմանը՝ քարոզական հանրամատչելի նյութերի հրատարակման և ԶԼՄ-ներում հիմնախնդիրների իրական լուսարանման միջոցով	առանց բռնության մշակույթի ձևավորում

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2011 թ.  
մայիսի 20-ի նիստի N 19  
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատա- րողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1	Քաղաքական և հասարակական կյանքում կանաց և տղամարդկանց մասնակցության մասին հետազոտության իրականացում	կիրականացվի «Հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները Հայաստանում» հետազոտությունը, կամփովիլեն արդյունքները, կկազմակերպվի կոնֆերանս հետազոտության արդյունքների ներկայացման և ընսարկման համար	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ /համաձայնությամբ/	հունիս	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի նիստի N5 արձանագրային որոշման «Գենդերային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» 33.2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետեր
2	Լրատվամիջոցների աշխատողների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	կկազմակերպվի «Գենդերային հիմնահարցեր» թեմայով դասընթաց՝ լրագրողների համար, որի ընթացքում կվերապատրաստվի շուրջ 20 լրագրող	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ /համաձայնությամբ/	օգոստոս-նոյեմբեր	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	
3	Հայաստանի Հանրապետության կուսումնասիրսի	ՀՀ աշխատանքի			հոկտեմբեր	ֆինանսավորում	

	թյունում գենդերային իրավիճակի պարբերական գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	գենդերային իրավիճակի շարժնթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, կմշակվեն Հայաստանի Հանրապետությունում գենդերային իրավիճակի շարժնթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների և դրա ներդրման վերաբերյալ առաջարկություններ	և սոցիալական հարցերի նախարարություն		չի պահանջվում	
4	Պետական ծառայողների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	կիրականացվեն «Գենդերային հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապարաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում կվերապարաստվեն բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների շուրջ 100 քաղաքացիական ծառայողներ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	հոկտեմբեր-դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջե	
5	Տեղական ինքնակառավարման մարմններում (այդ	մարզիորիդի նիստերի օրակարգերում գենդերային	ՀՀ տարածքային	յուրաքանչյուր	արտաքյուղետային միջոցներ	

	թվում համայնքների ղեկավարների աշխատակազմնում) կանանց դերակատարման բարձրացում և ամրագրում	թեմաներով գեկույցների ներառում	կառավարման նախարարություն		եռամյակ		
6	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում համայնքների ղեկավարների աշխատակազմնում) գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	բոլոր մարզերում կանցկացվեն խորհրդակցություններ /10 խորհրդակցություն/	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՀՀ մարզային տարաններ	հունիս	ֆինանսավորում չի պահանջվում	
7	«Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագրի իրականացում	ծրագրի շրջանակում աջակցություն կցուցաբերվի 70 կին գործարարի	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	ղեկտեմբեր	ՓՄՁ-ի պետական աջակցության 2011 թվականի ծրագրերի շրջանակում	
8	«ՓՄՁ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն» ծրագրի իրականացում	ծրագրի շրջանակում աջակցություն կցուցաբերվի շուրջ 200 կին գործարարի	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	«Հայաստանի փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/	ղեկտեմբեր	ՓՄՁ-ի պետական աջակցության 2011 թվականի ծրագրերի շրջանակում	
9	«ՓՄՁ-ի սուբյեկտներին	ծրագրի շրջանակում	ՀՀ Էկոնոմիկայի	«Հայաստանի	ղեկտեմբեր	ՓՄՁ-ի	

	գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի իրականացում	աջակցություն կցուցաբերվի շուրջ 1300 կին գործարարի	նախարարություն	փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ /համաձայնությամբ/		պետական աջակցության 2011 թվականի ծրագրերի շրջանակում	
10	Արյունաբերական ոլորտներում (հատկապես թեթև արյունաբերության) կանաց համար նոր աշխատատեղերի ստեղծում	կստեղծվի կանաց համար շուրջ 600 աշխատատեղ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	մասնավոր հատված /համաձայնությամբ/	դեկտեմբեր	պետական-մասնավոր համագործակցությամբ, մասնավոր հատվածի ֆինանսավորում	
11	Գյուղատնտեսության և գյուղական ենթակառուցվածքների բարեկավում, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանաց մասնակցության հնարավորությունների ընդլայնում և այդ ուղղությամբ միջոցառումների իրականացում	Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրով հանրապետության Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում կշարունակվեն ջրամատակարարման և ոռոգման համակարգերի վերակառուցման, ջրաբբիացման, գազաֆիլացման անավարտ շինարարական աշխատանքները՝ շուրջ 315 մէն դրամ գումարով: Միաժամանակ վերը նշված ծրագրի շրջանակներում հանրապետության յոթ մարզերում նախատեսվում է	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ մարզպետարաններ /համաձայնությամբ/	դեկտեմբեր	միջազգային կազմակերպություններ	

		իրականացնել ենթակառուցվածքների զարգացման աշխատանքներ (խմելու և ոռոգման ջրագծերի կառուցում, խմելու ջրի և ոռոգման ցանցի վերակառուցում, գազաֆիկացում և այլն), ինչը կնպաստի գյուղական վայրերում կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարեկավմանը:				
12	Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում գյուղի կանանց աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացում, մասնավորապես, մատչելի պայմաններով տրվող վարկային և միկրովարկային ծրագրերի իրականացում	«Գյուղական ֆինանսավորման կառույց» ծրագրի իրականացման գրանցում (ԳՖԿ ԾԻԳ) միջոցով մատչելի պայմաններով վարկեր կտրամադրվեն գյուղատնտեսական գործունեություն իրականացնող (այգեգործական, դաշտավարական, անասնապահական, թռչնաբուծական, ձկնաբուծական, մեղվարուծական, գինեգործական, պտղի և կաթի վերամշակման և այլն) ֆերմերներին՝ ակնկալվում է կին գործարարներին տրամադրել շուրջ 200 միավոր վարկ:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		դեկտեմբեր	միջազգային կազմակերպություններ
13	Հանրակրթական դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացում ուղղված	կմշակվի «Գեներային գիտելիքների հիմունքներ» թեմայով ներդիր, որը	ՀՀ կրթության և գիտության նախարարություն		հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում

	նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	կհաստատվի ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով և կներառվի «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում				
14	Հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	կմշակվի <<Գենդերային գիտելիքների հիմունքներ>> թեմայով ներդիր, որը կհաստատվի ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով և կներառվի հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման մոդուլում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում	
15	Սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, աղջկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը	կմշակվի և կներդրվի «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկ՝ նախատեսված դասղեկների համար	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեով ձեռնարկների համար նախատեսված գումարի շրջանակներում	

16	Կանանց վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող կաթնագեղձերի և սեռական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացում	ծրագրի շրջանակում ակնկալվում է արգանդի վզիկի քաղցկեղի սկրինինգում ընդգրկվածության մեծացում 10%-ով, «վաղ փուլերում հայտնաբերված կաթնագեղձերի քաղցկեղի դեպքերի թվի մեծացում 5%-ով	ՀՀ առողջապահության նախարարություն	բուժհաստատություններ /համաձայնությամբ/	դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջե
17	Մարզերում /Հրազդան, Արմավիր, Ապարան/ թժկական ժամանակակից կենտրոնների վերակառուցում և հագեցում	այդ տարածաշրջաններում տղամարդկանց և կանանց որակյալ բուժօգնություն տրամադրում, Երևանի բուժհաստատություններ ուղեգրումների կրճատում 20%-ով	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջե
18	Բարեկավել կանանց վերարտադրողական առողջությունը, ծննդօգնության բուժհաստատությունների կարողությունների հզորացում	կմշակվեն ամրուսուր բուժհաստատությունների աշխատանքի սկզբունքները/չափորոշիչները, որը կիաստատվի ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	ՀՀ առողջապահության նախարարություն	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ /համաձայնությամբ/	սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե
19	Սեռով պայմանավորված ընտրովի աբորտների կանխարգելման ուղղված ծրագրերի մշակում և ներդրում	կիրականացվի իրավիճակային ուսումնասիրություն և վերլուծություն սեռով պայմանավորված աբորտների և դրա պատճառների վերաբերյալ,	ՀՀ առողջապահության նախարարություն	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ /համաձայնությամբ/	հունիս	ՀՀ պետական բյուջե

		կմշակվի առաջարկությունների փաթեթ				
20	«Կին միջազգային կինսփա- ռատոնի» իրականացում	կինսփառատոնի ընթացքում կցուցադրվեն 50-ից ավելի ուժինոր կանանց ֆիլմեր	ՀՀ մշակույթի նախարարու- թյուն	«Լիզա» իրավական, գենդերային, մշակութային հիմնադրամ /համաձայնու- թյամբ/	նոյեմբեր- դեկտեմբեր	ՀՀ պետական բյուջե ՀՀ մշակույթի նախարարու- թյուն «Աջակցություն կինսփառատոնի» ծրագրի շրջանակներում
21	Ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների միջոցով վարպետաց դասերի կազմակերպում	Երևանում և ՀՀ մարզերում 36 մասնագետ կվերապատ- րաստովի ավանդական տոննե- րի, ծեսերի, գորգագործու- թյան և կարպետագործու- թյան հետ կապված գիտելիքներ և հմտություն- ներ ձեռք բերելու համար	ՀՀ մշակույթի նախարարու- թյուն	«Ավանդական տոնների վերա- ծնունդ» հասա- րակական կազ- մակերպություն, «Հովհ.Շարամ- բեկի անի անվ. Ժողովրդական արվեստի թան- գարան» ՊՈԱԿ, «Սուեփանականի մշակույթի և ժամանցի կենտ- րում» ՊՈԱԿ /համաձայնու- թյամբ/	հուլիս	ՀՀ պետական բյուջե «Պետական աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմա- նը» ծրագրի շրջանակներում
22	ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետա- րանում գենդերային հարցե- րով գրադադար մշտական մարմին ստեղծում	համապատասխան մարզպետ- ների հրահանգներով կստեղծ- վեն գենդերային հարցերով հանձնաժողովներ	ՀՀ մարզպետա- րաններ Երևանի քաղաքապետա- րան /համաձայ-		հուլիս	ֆինանսավորում չի պահանջվում

			նությամբ			
23	Համայնքներում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	բոլոր մարզերում կանցկացվեն քննարկումներ, կյոր սեղաններ համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքականությամբ/ համաձայնությամբ/	ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ /համաձայնությամբ/	նունիս հույնի	միջազգային կազմակերպություններ
24	Էլեկտրոնային պորտալներում աղետների ռիսկերի նվազեցման արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գործընթացներում գենդերային հիմնախնդիրների մասին ինֆորմացիայի պարունակող հղումների տեղադրում	համացանցում կտեղադրվեն գենդերային հիմնախնդիրների մասին իրազեկման 'յութեր' հասարակության լայն շերտերի, մասնավորպես, երիտասարդների համար	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր /համաձայնությամբ/	հունիս	միջազգային կազմակերպություններ
25	Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մեջ գենդերային քաղադրիչի ներդնում	աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մեջ առանձին կետով կներկայացվեն գենդերային հիմնախնդիրները	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր /համաձայնությամբ/	3-րդ եռամյակ	միջազգային կազմակերպություններ
26	Սեփի հատկանիշի հիման վրա աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում տեղեկատվական ակցիաների անցկացում (հեռուստահաղորդումներ, իրապարակումներ, ճեպագրույցներ, քննարկումներ)	կպատրաստվի 2 հեռուստահաղորդում, որը կհեռարձակվի ամբողջ հանրապետության տարածքով (Շանթ հեռուստաընկերություն) և կիրատարակվի տեղեկատվական ձեռնարկ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր /համաձայնությամբ/	օգոստոսի 10-30-ը	միջազգային կազմակերպություններ
27	Աղետների նվազեցման ազգային պլատֆորմում	ՀՀ աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատ-	ՀՀ արտակարգ իրավիճակների	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	2-րդ կիսամյակ	միջազգային կազմակեր-

	գենդերային թեմատիկ խմբի ստեղծում	ֆորմի համար կսեղծվի գենդերային զգայուն ցուցիչների և մեխանիզմների համակարգ	նախարարություն	/համաձայնությամբ/		պություններ	
28	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսուցողական ծրագրերի մեջ գենդերային հիմնախնդրի ներառում	կվերահատարակվեն 2 ուսուցողական ձեռնարկներ, որոնք կներառեն «ԱՌՆ-ն ու գենդերային հիմնախնդիրները» ուսուցողական թեմատիկ դասընթացներ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հիմնախնդիրները /համաձայնությամբ/	հովիսօգնություն	միջազգային կազմակերպություններ	

